

Մ Ա Յ Ր Ը

Ա.

Յոյսի թեւովն ոսկեւար
Գամուած մահճին՝ կը հեծեծէ տըրտիւն
Մայր մը թշուառ՝ մանուկներու կաթնասուն.
Յաւն իր կուրծքին տակ փոթորիկ մ'է ահեղ
Մինչ կը քամուի սիրտն իր աչքէն յորդ հեղեղ:

Ո՛հ, աչքերն այդ մայրենի,
Խորհուրդ մ'ունին տանջ, խորհուրդ անթափանց,
Գեղեցկադիր կոպերուն խորն ամպամած
Կու լայ հողին, ականակիտ աւազան,
Ուր սէրն ամբիժ կը ցոլանայ հրաշագան:

Աչքե՛ր ծաւի ու պայծառ,
Որոնց մէջէն կը ճաճանչէ լուսածոր
Մայրութիւնն իր զերդ նահատակ սրդաւոր:
Ճակատադրին հարուածին տակ աննըկուն
Հեծեց, լացա՛ւ, բայց մընալով միշտ կանգուն:

Ո՛չ ոք դըթաց իր վըրան,
Ո՛չ ոք իր ցաւն հասկըցաւ, ցաւն անողոր,
Որ իր սրտին մէջ կը կրծէր զինքն անհող...
Լըքուած իր թարմ գեղեցկութեան մէջ չըքեղ,
Դարձաւ թիրախը մարդերու թիկնադեղ:

Անպատըստար ու մենակ,
Կանգնած հըսկայ փոթորկին դէմ չարիքի,
Նէ համակամ մահուան, դաւի, արցունքի,
Ձեռքերն ուղղեց դէպի կամարը յոյսին,
Ըստաստումով ճառագայթի մ'երկընքին:

Բ.

Յաղթանակեց ցաւին. հրաչքն այդ գործեցին
Կամքն իր հըղօր եւ մայրենի սէր բնածին.
Թէեւ արցունքն աղի՝ բաշխեց փոքրերուն,
Այլ վեր բռնեց հըպարտ ճակատն հովերուն:

Սրտակեղեք հողը կեանքին եւ լոյսի,
Իր տրամախոց հողին մէջ զիւցազնի՝
Փոթորկեցաւ դալարումով աղեխարշ,
Ի տես նօթի բերաններուն յամրաշարժ:

Փողոցն ի վար տղամաշաղախ եւ զազիր
Իջաւ ըստուեր մը կանաչի տրամալիր.
Անութիւն տակ սեղմած լանջն իր ազադուն,
Փրկեց մահէն իր փոքրիկները նուաղուն:

Գ.

Հասակազեղ եւ չըքնաղ,
Դեռատի կինն այդ, քաղցրութիւն մայրենի,
Որուն ձիւնէ պարանոցէն քնքշենի
Ձոյգ մանուկներ մանեակի պէս կան կախուած,
Սիրոյ արձան մ'է կամ Աստղիկն երկրայած:

Մոլորածի պէս տարտամ
Կը նային լուռ մանուկներն իր աչքերուն,
Եւ ինքն անոնց ու կ'երազէ հեծկըլտուն...
Իր ձիւնաթուրմ մարմնոյն ամբիժ շղարչին տակ՝
Կարծես ըլլար արծաթ լուսինն ամպափակ:

Ձերդ ներդաշնակ մեղեդի՛
Ձայնն իր անոյշ, կամ զեփիւռ՝ չո՛ւնչը կերկեր,
Որ անդանդատ կապոյտն անհուն կը շոյէր.
Կամ վէտվէտուն լըճակին երզը թրթռուն,
Ուռենիին տակ վարսագեղ, արեծփո՛ւն:

Երկնատենչիկ կը հեւա՛յ...
Եթէ սիրտն իր թոյլ տայ՝ պիտի սաւառնի
Աստղերէն վեր, մըխըրճի գիրկն անհունի.
Բայց զոյգ թաթեր լուսափրթիթ վարդերու
Կը կապեն զինքն հողին տրտում եւ աղու:

Հծծին մ'ահա եւ լալիւն
Կը բարձրանայ սրտածմլիկ, սրդաւեր,
Ու համբոյրով կ'օծուին ճակատն ու այտեր
Թարմագեղ մօր՝ որ իր կուրծքին կը սեղմէ
Արդար գանձերն ու խելադար կ'արտասուէ...: